ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴԵՐՔԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

N 29/29.2/3678-17
« 30 » 06 2017 թ.

<<ԳԵՈՌԵՅԴ>> ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Ա. Սաֆարյանին

Հասցեն ք. Երևան, Սունդուկյան 17 շ., թիվ 92
Հեռ. 093 71 14 60

Հարգելի պարոն Սաֆարյան

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 28 հունիսի 2017 թվականի թիվ 80-Ա հրամանի համաձայն, երկարաձգվել է «ԳԵՈՌԵՅԴ» ՓԲ ընկերության օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀՌՎ-29/066 թույլտվության ժամկետը:

Ծանուցումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, Դուք հրավիրվում եք ընդերքի գործակալություն՝ ընդերքօգտագործման թիվ ՊՎ-066 պայմանագրի փոփոխությունը վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար:

Սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, վերոնշյալ հրամանը կճանաչվի ուժը կորցրած:

Առդիր՝ հրամանի պատճենը 2 էջ:

Հարգանքով՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Կատ.՝ Ք. Գևորգյան
011 32 12 46(7)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

28 հունիսի 2017 թվականի N 80-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 42-րդ և 44-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի մայիսի 23-ի թիվ ԲՓ 49 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական եզրակացությունը, «ԳԵՈՌԵՑԴ» ՓԲ ընկերության 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ 3 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԳԵՈՌԵՑԴ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ ընկերություն)՝ ՀՀ Սյունիքի մարզի Մուցքի ոսկի-բազմամետաղային հանքերևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու 2012 թվականի հուլիսի 13-ի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹՎ-29/066 թույլտվության մեջ կատարել փոփոխություններ՝

1) թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել 2 տարով, սահմանելով մինչև 2019 թվականի հունիսի երեսունը. սույնը հանդիսանում է երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետի 2-րդ երկարաձգումը,

2) տրամադրված տարածքի մակերեսը նվազեցնել 600 հա-ով, սահմանելով 600 հա, հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4373992 Y=8577900; 2.X=4376992 Y=8577900; 3.X=4376992 Y=8579900 4.X=4373992 Y=8579900 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով):

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մուցքի ոսկի-բազմամետաղային հանքերևակումում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման թիվ ՊՎ-066 պայմանագրում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետի երկարաձգման դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի փոփոխված տարբերակը,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ